

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

(2015թ. տարեկան հաշվետվություն)

Լրատվություն

Լոռու մարզում գործում են 6 հեռուստաընկերություն, 2 ռադիոխմբագրություն, տեղական լրատվական մեկ կայք, 7 տպագիր պարբերական: Բացի տեղական լրատվամիջոցներից, մարզում լրագրական գործունեություն է ծավալում նաև հանրապետական զանգվածային լրատվամիջոցների 8 թղթակից:

Տպագիր լրատվամիջոցներ ունեն Վանաձորը (1 օրաթերթ, 1 շաբաթաթերթ, 4 պարբերաթերթ և 2 ամսագիր), Ալավերդին՝ 1 շաբաթաթերթ, Սպիտակը՝ 2 ամսաթերթ և Մարգահովիտ գյուղը՝ 1 պարբերաթերթ:

Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում հեռուստաաշտարակային ցանցով հեռարձակվում են հանրապետական և օտարերկրյա թվով 8 հետևյալ հեռուստաընկերությունների հաղորդումները՝

- «Հ1» հանրային հեռուստաընկերություն
- Հ2» հեռուստաընկերություն
- «Արմենիա» հեռուստաընկերություն
- «Շողակաթ», հեռուստաընկերություն
- «Շանթ» հեռուստաընկերություն
- «Կենտրոն» հեռուստաընկերություն
- «Երկիր մեդիա» հեռուստաընկերություն (հեռարձակվում է միայն Վանաձորում):
- PTP հեռուստաընկերություն:

Բացի վերոհիշյալներից, Վանաձորում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ, որոնք առավել մեծ թվով ծրագրեր դիտելու հնարավորություն են ընձեռում:

Մարզի առանձին գյուղական համայնքներում որոշակի դժգոհություն կա հեռուստահաղորդումների հեռարձակման թե որակի և թե թվաքանակի վերաբերյալ, որի բարելավման ուղղությամբ աշխատանքներ են տարվում Վանաձորի հեռահաղորդիչ կայանի ղեկավարության հետ: Ըստ կայանի պատասխանատուների՝ 2016թ. հունվարից

թվային հեռարձակման անցնելուց հետո մարզի բոլոր համայնքները հնարավորություն կունենան դիտելու բոլոր 8 հեռուստածրագրերը՝ որակյալ հեռարձակմամբ:

Հեռուստաընկերություն ունեն 4 համայնքներ՝ Վանաձորը՝ 3, մեկական հեռուստաընկերություն Ալավերդի, Սպիտակ և Տաշիր քաղաքները (վերջինս գրանցված է, բայց չի գործում): Ինչպես հայտնի է, մարզային հեռուստաընկերությունների արտոնագրերի ժամկետը երկարաձգվել է մինչև 2020թվականը, ինչը մրցակցության հնարավորություն կստեղծի դրանց համար:

Տեղական ռադիոցանց ունեն Վանաձոր և Սպիտակ քաղաքները:

Մարզային և հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով մշտապես լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող իրադարձությունները, մարզխորհրդի նիստերը, հանրային հնչեղության բանակցությունները, խորհրդակցությունները: Իսկ այնպիսի հարցերի մասին, որոնք իրենց բնույթով ռազմավարական, սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն են ունեցել, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների և գլխավոր մասնագետների հետ կազմակերպվել են հեռուստահարցազրույցներ, «Կլոր սեղան»-ներ, ասուլիսներ և այլն:

2015թ.-ի ընթացքում մարզպետարանի աշխատակազմի գործունեության լուսաբանումը տեղական հեռուստահաղորդումներով կազմել է շուրջ 300 էթերաժամ, իսկ մարզային թերթում լուսաբանվում են բոլոր մեծ թե փոքր իրադարձային միջոցառումները, իսկ մարզխորհրդի նիստերը լուսաբանվել է ընդարձակ լրատվությամբ:

Մարզի բոլոր ԶԼՄ-ներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն Լոռու մարզպետարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, ծրագրերի, կազմակերպվող միջոցառումների մասին: Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների մարզային աշխատանքային այցելությունների ժամանակ ԶԼՄ-ների ներկայացուցիչներին տրամադրվել են մամլո հաղորդագրություններ, սահմանված կարգով կատարվել լրագրողների հավատարմագրում:

Հաշվետու տարվա ընթացքում սպասարկվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «Միասնական տեղեկատվական հարթակ» կայքէջի Լոռու մարզպետարանի «Մամլո հաղորդագրություն» բաժինը, ուր գետեղվել են հաղորդագրություններ մարզին առնչվող հանրային կարևորության իրադարձությունների, դեպքերի մասին:

Հանրապետական և տեղական լրատվամիջոցներում եղել են Լոռու մարզին վերաբերող հարյուրից ավելի կարևորագույն հրապարակումներ: Դրանց մի մասը եղել են քննադատական բնույթի՝ առավելապես բնապահպանական, սոցիալական, առողջապահական թեմաներով, որոնք օպերատիվ արձագանք են ստացել մարզպետի և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից: Գրեթե յուրաքանչյուր համարում Լոռուց տեղեկատվություն է հրապարակվում „Հայաստանի հանրապետություն,, թերթում:

2015թ-ի ընթացքում պարբերաբար հարստացվել է տարածքային կառավարման միասնական համակարգում ընդգրկված մարզպետարանի պաշտոնական կայքը (www.ori.mtaes.am), որի «Տեղեկատվական հարթակ» բաժինը ընդգրկում է Լոռու մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ մշտապես նորացվող տեղեկատվությունները: «Նորություններ» էջում տեղեկատվությանը կից տեղադրվում են ոչ միայն լուսանկարներ, այլև՝ տեսանյութեր (Ինչպես „Մարզպետարանի ժամ,, հաղորդումը, այնպես էլ այս էջում տեսանյութերի տեղադրումը, միակն է հանրապետությունում): Այդ էջում լուսաբանվել են նաև ՀՀ պաշտոնատար անձանց, արտերկրի պատվիրակությունների այցելությունները, մարզային հիշարժան դեպքերն ու իրադարձությունները:

Բաժնի գործունեության գլխավոր ուղղություն է համարվել „ Մարզպետարանի ժամ,, հաղորդումը, որը յուրաքանչյուր շաբաթ հաղորդվում և երեքշաբթի օրերին վերահաղորդվում է «Ֆորտունա», «Անկյուն+3», «Միգ» , «Սլավ մեդիա» հեռուստաընկերություններով : 2015թ. ընթացքում ունեցել ենք 40 թողարկում (2012թ. ի վեր՝ 196 թողարկում):

Մարզի գրեթե բոլոր համայնքները, չնչին բացառությամբ ունեն էլեկտրոնային հասցեներ և ինտերնետային կայքէջեր: Շուրջ 56 գյուղական համայնքներ համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով միացած են մարզպետարանի սերվերին, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպել էլեկտրոնային փասթաթղթաշարժը համայնք-համայնք և համայնք-մարզպետարան-նախարարություն-կառավարություն ուղղություններով:

Աշխատանք Հասարակական կազմակերպությունների հետ

Մարզում գրանցում ունեն 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնցից ակտիվորեն գործում են շուրջ 30-ը: Դրանցից շատերը ակտիվ համագործակցում են մարզպետարանի աշխատակազմի գրեթե բոլոր ստորաբաժանումների հետ:

Մարզպետարանի հետ առավել ակտիվ փոխհամագործակցում են «Առավոտ», «Խաչվող ուղիներ», հունական «Էլպիդա», «Օրիուս» բնապահպանական, «Օրրան», «Հայկական Կարիտաս», կազմակերպությունները, «Հայկական Կարմիր Խաչի Լոռու մարզային կազմակերպություն», «Թոհիք», «Մշո զարմ», «Համալսարանական կրթությամբ կանայք», «Լիարժեք կյանք», «Զանգակ», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» «Խուլերի կրթամշակութային կենտրոն», «Լուսաստղ», «Մանկական կենտրոն», և այլ ՀԿ-ներ:

ՀԿ ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են մարզպետարանում տեղի ունեցող կամ մարզպետարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին, բաժինը մշտապես օգնել ու համագործակցել է „Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիցիա,, և իրավական հարցերի գծով ՀԿ-ներին՝ մարզում նրանց կողմից կազմակերպվող միջոցառումների ժամանակ:

Ազգային փոքրամասնություններ

Լոռու մարզի ներկայիս տարածքը խորհրդային տարիներին ազգային փոքրամասնություններով ամենաբնակեցվածներից էր: Որոշակի տարիների հանրապետության մասշտաբով ազգային փոքրամասնությունների շուրջ 50 տոկոսը բնակվում էր Տաշիրի, Թումանյանի և Գուգարքի տարածաշրջաններում: Սակայն վերջին մեկուկես-երկու տասնամյակներում տարածաշրջանում սկիզբ առած էթնիկական տեղաշարժերի հետևանքով արտագաղթեցին նաև մեծ թվով այլազգի բնակիչներ:

2015թ. հունվարի տվյալներով Լոռու մարզում բնակվում են 3107 ռուս, 875 հույն, 653 եզդի, 27 քուրդ, 8 ասորի, 349 այլ ազգերի ներկայացուցիչներ: Հիմնական բնիկ ազգաբնակչության՝ հայերի հետ նրանք ապրում են իրավահավասարության պայմաններում: Ազգային փոքրամասնությունները բոլոր պայմաններն ունեն ազգային մշակույթի ու կրթության պահպանման համար: Դրանց են նպատակաուղղված ազգային հասարակական ու մշակութային կազմակերպությունները:

Մարզպետարանը մշտապես ուշադրություն է նվիրում նաև մարզում բնակվող ազգային փոքրամասնությունների հարցերին՝ կապ պահպանելով նրանց հասարակական կազմակերպությունների հետ: Մարզում գործում է այդպիսի 5 կազմակերպություն՝ հունական սփյուռքի ազգապահպանական «Էլպիդա», «Պոնտոս» և «Ակմի», ազգային մշակույթի, կրթական և ազգամիջյան կապերի զարգացման հարցերով զբաղվող «Ուկրաինա» և ռուսազգի փոքրամասնության սոցիալական, մշակութային, կրթական

հիմնախնդիրներով զբաղվող «Օրշչեստվո Ռոսիի» ՀԿ-ների հետ: Նրանց ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են մարզխորհրդի նիստերին, պետական, ազգային տոների հանդիսություններին, համահամայնքային և մարզային միջոցառումներին: Տոնահանդեսներում կատարումներով հանդես է գալիս ուկրաինացիների երգչախումբը:

2015թ. Լոռու մարզի զանգվածային լրատվամիջոցները բազմիցս անդրադարձել են ազգային փոքրամասնությունների առօրյայի ու խնդիրների լուսաբանմանը, կրոնական կազմակերպությունների գործունեությանը:

Վերոհիշյալ հասարակական կազմակերպությունները միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպման ժամանակ, որպես կանոն հովանավորվում են Լոռու մարզպետի կողմից:

Նկատենք, որ ազգային փոքրամասնությունների ՀԿ-ները, դրանց ներկայացուցիչները չեն մասնակցում քաղաքական տարբեր հոսանքների կողմից երբևէ կազմակերպվող միջոցառումների, մանավանդ՝ բողոքի ակցիաների, նախընտրում են չեզոք դիրք ունենալ:

Հիշատակելի է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ավարտվել է Ագարակ-Օձուն ավտոճանապարհի հիմնանորոգումը, և դրանց միջնահատվածում գտնվող հունարնակ Յաղդան և Կողես համայնքների բնակիչները, ովքեր տարիներ շարունակ բողոքում էին անբարեկարգ ճանապարհ ունենալուց, իրենց գոհունակությունն են արտահայտում ՀՀ կառավարությանն ու մարզպետարանին:

Աշխատանք կրոնական կազմակերպությունների հետ

2015թ. մարզում գործունեություն են ծավալել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գուգարաց թեմը, Հայ կաթողիկե եկեղեցու Տաշիրի թեմը, Հայ Ավետարանական եկեղեցու Լոռու թեմը, Վանաձորի Ավետարանական հավատքի եկեղեցին, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի Վանաձորի եկեղեցին, Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին:

Գործող կրոնական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ մարզպետարանի առնչությունները եղել են պաշտոնեական գործառույթներից բխող հանգամանքներով: ՀՀ Լոռու մարզպետի կողմից կրոնական կազմակերպությունների ղեկավարների հետ հանդիպումները եղել են ըստ անհրաժեշտության: Նրանց հետ

հիմնականում և պարբերաբար, առնչվել են մարզպետարանի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատողները:

2015թ. ևս ՀՀ Լոռու մարզպետը գործնական հարցերով առավելապես հանդիպումներ է ունեցել Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի հետ, որի ընթացքում քննարկվել են համատեղ միջոցառումներ կազմակերպելու, թեմին պատկանող «Ծիծեռնակ» ճամբարում արցախցի և սիրիահայ երեխաների ամառային հանգստի կազմակերպման, «Ձեռք մեկնիր եղբորդ» կարգախոսով բարեգործական ծրագրի գործունեության, պետական, ազգային, մասնագիտական տոներին՝ սրբազան հոր, եկեղեցական տաղավար տոներին՝ մարզային, համայնքային իշխանությունների ներկայացուցիչների մասնակցության մասին և այլ հարցեր: Գուգարաց թեմի բարեգործական նախաձեռնությունները մշտապես խրախուսվել են Լոռու մարզպետարանի կողմից, հարկ եղած դեպքերում ցուցաբերվել է համակողմանի աջակցություն: «Ձեռք մեկնիր» ծրագիրը դարձել է Գուգարաց թեմի և մարզպետարանի ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ բարեգործական գործունեություն: Դրա շրջանակներում օգնություն է ցույց տրվել շուրջ 120 անապահով ընտանիքի:

Ավանդույթ է դարձել Գուգարաց թեմի հոգևոր հայրերի մասնակցությունը ՀՀ պետական տոներին, տեղական մասսայական միջոցառումներին և տոնահանդեսներին: Մասսայական գրեթե բոլոր միջոցառումները, կազմակերպիչների խնդրանքով, սկսվում են հոգևոր հայրերի օրհնությամբ: Փոխադարձաբար, հայ եկեղեցական տոներին և հիշատակի օրերին հրավիրվում և մասնակցում են Լոռու մարզպետը, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ:

Տարվա ընթացքում Լոռու մարզպետն ընդունել է նաև Հայ Ավետարանչական եկեղեցու և «Ավետարանական հավատքի եկեղեցու» հոգևոր ղեկավարներին, զրուցել նրանց կողմից ղեկավարվող եկեղեցիների խնդիրների, կրոնական մյուս կազմակերպությունների հետ հանդուրժողականությանն առնչվող հարցեր:

Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր դասի ներկայացուցիչների հետ գործնական կարգով հանդիպել են մարզպետարանի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի, Կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի բաժնի և Վանաձորի քաղաքապետարանի մշակույթի բաժնի աշխատողները՝ Վանաձորի Սուրբ Գրիգոր

Նարեկացի եկեղեցու ներքնահարկ-դահլիճում պարբերաբար կազմակերպվող արվեստի գործերի ցուցահանդեսների, եկեղեցուն կից գործող և համայնքային ենթակայության համույթների համերգների, մասնագիտական տոներին նվիրված և այլ կարգի միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերի շուրջ:

2015թ.-ի ընթացքում կազմակերպվել և անց է կացվել այդպիսի շուրջ 25 միջոցառում:

Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի գործունեությունը լայնորեն լուսաբանվում է ոչ միայն մարզի ԶԼՄ-ների, այլև՝ թեմի կողմից լույս ընծայվող «Հայրենիք և եկեղեցի» պարբերականով, թեմի համանուն կայքէջով:

Կրոնական կազմակերպությունների առաջնորդները, ներկայացուցիչները որևէ դժգոհություն չունեն մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատուներից և նրանց միջև բացահայտ տարաձայնություններ չկան:

Ֆիդելտովո և Լերմոնտովո համայնքներում բնակվող մոլուկանները, որոնք «Պրիգունական» դավանանքի հետևորդ են, իրենց կրոնական ծեսերն ու միջոցառումներն անց են կացնում խիստ ինքնամիտ մթնոլորտում և, մեր ունեցած տեղեկություններով, երիտասարդ սերունդը կրոնական մոլեռանդություն չի դրսևորում, իսկ համանման միջոցառումները կարծես թե դիտվում են՝ որպես ազգային սովորությամբ պահպանվող ժողովրդական միջոցառումներ:

Մեր ունեցած տեղեկություններով օրինական գրանցում չունեցող «Եհովայի վկաներ» աղանդի ներկայացուցիչների կողմից մարզի տարբեր բնակավայրերում դրսևորվող գործունեության վերաբերյալ: Ահազանգեր կան, որ նրանք զարտուղի ճանապարհներով զբաղվում են հոգեորությամբ: Բաժնի կողմից նրանց հետ հանդիպելու քայլերն ապարդյուն են եղել:

Հաշվետու ժամանակաշրջանում կրոնական կազմակերպությունների կողմից համայնքներում որոշակի ծրագրեր են իրականացվել: «Հույս Հայաստանին» կազմակերպությունը և «Հայ ավետարանչական ընկերակցությունը» Լոռու մարզում բարեգործական ծրագրեր են իրականացնում արդեն 21 տարի: Ֆրանսիացի և ֆրանսիաբնակ հայ բարերարների աջակցությամբ 15 տարի առաջ Սպիտակում հիմնվեց

բարեգործական մանկական բուժարան՝ ատամնաբուժական և մանկաբուժական կաբինետներով: Բուժարանը վերջին տարիներին նորացման և արդիականացման կարիք ուներ, ուստի «Հույս Հայաստանին» կազմակերպությունը Ֆրանսիայի հայ բժիշկների միության (UMAF) աջակցությամբ ձեռնամուխ եղավ բուժհաստատության վերանորոգմանը, որից հետո նաև՝ նորագույն բուժասարքավորումներով հագեցմանը: Բուժհաստատության հանդիսավոր բացումը տեղի ունեցավ հոկտեմբերի 22-ին: Այստեղ բարեգործական հիմունքներով ամսական կսպասարկվի շուրջ 300 երեխա, դեղորայքի բաշխումն անվճար է: Նույն օրը Սպիտակ քաղաքում «Հույս Հայաստանին» կազմակերպության նախաձեռնությամբ և Ֆրանսիայի Լուարի շրջանի պատգամավոր Ֆրանսուա Ռոշբլուանի, ինչպես նաև Ֆրանսիայի համահայկական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ հանդիսավորությամբ բացվեց թիվ 2 դպրոցի մարզահրապարակը: «Հույս Հայաստանին» կազմակերպության և Ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոնալ խորհրդի աջակցությամբ Արևաշողի համայնքային կենտրոնի մասնաշենքում բարեկարգվել է տարածք, ուր տեղավորված է բարեգործական ատամնաբուժարան երեխաների համար: Այն կահավորվել է անհրաժեշտ բուժասարքավորումներով և պարագաներով: Բարերարները վստահեցրին, որ բարեգործական ծրագրերն այսուհետ ևս շարունակվելու են:

Լոռու մարզում բարեգործական լայնածավալ գործունեություն է իրականացնում Հայ Կաթողիկե եկեղեցու «Հայկական Կարիտաս» բարեգործական կազմակերպությունը: Տաշիրի տարածաշրջանում շահառուներին ցուցաբերում է սոցիալական, առողջապահական և հոգեբանական աջակցություն: Թվով 60 կարիքավորներ օգտվել են բարեգործական ճաշարանից, ստացել բժշկական օգնություն, միայնակ ծերերը նաև՝ տնային խնամք: Վանաձոր քաղաքում է գործում «Հայկական Կարիտասի» «Փոքրիկ իշխան» ամենախոցելի ընտանիքներին սատարող սոցիալ-հոգեբանական կենտրոնը, որի շուրջ 50 շահառուներ ստանում են թե՛ նյութական և թե՛ հոգեբանական աջակցություն: 2015թ. աշնանից մեկնարկել է «Տաք ձմեռ» ծրագիրը, որի շրջանակներում շուրջ 60 անապահով տարեցներ ստանում են մոտ 40000 դրամ օգնություն ծախսած էլեկտրաէներգիայի կամ գազի ծախսերը հոգալու համար:

2015թ. ընթացքում ևս Լոռու մարզի զանգվածային լրատվամիջոցները՝ մարզային «Տորտունա», Վանաձորի «ՄԻԳ», «Լոռի», Ալավերդու «Անկյուն+3» հեռուստաստուդիաները, մարզային «Լոռու մարզ» և «Վանաձորյան խճանկար» թերթերը, «Loeinews» կայքէջը անդրադարձել են ազգային փոքրամասնությունների

առօրյայի ու խնդիրների լուսաբանմանը, կրոնական կազմակերպությունների գործունեությանը:

Սամվել Խալաթյան

**Լոռու մարզպետարանի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ**